

SORHUL; Documenti di architettura Armena. vol. 20.—Milano OEMME Edizioni, 1989.—111 p., ill.

ՍՈՐՀՈՒԼ/Հայ ճարտարապետության վավերագրեր, հատ. 20:— Միլան, ՕէՄՄԷ հրատարակչություն, 1989:—111 էջ, լուս., շափ.:

Պատմական Ատրպատականի (հյուսիսային Իրան) հայաբնակ գավառներում բազմաթիվ մեծ ու փոքր եկեղեցիներ են սփռված: Տարբեր առիթներով հպանցիկ ակնարկներ են նվիրվել հայ եկեղեցաշինության այս հուշարձաններին: 1989 թ. Միլանում լույս տեսնող «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարի 20-րդ հատորը իր մեջ պարփակեց Սալմաստ-Ուրմիայի, Թավրիզի և Մակուի (մինչև 10-րդ դարը՝ Վասպուրականի նահանգ) հայ կրոնական շինություններն ամբողջությամբ:

Հատորի հեղինակ Ադրիանո Ալփակո-Նովելլոն ընթերցողներին ծանոթացնում է իտալա-հայկական երեք արշավախմբերի կատարած աշխատանքների հետ (1976, 1977, 1984), խորագրված «Հաշվետվություն իրանյան Ադրբեջանում կատարված առաքելությունների»: Առաջին երկուսի հետազոտությունների արդյունքներն աստիճանաբար հրատարակվել են, իսկ 1984-ինը առաջին անգամ այս գրքում է տպագրվում:

Հեղինակը պատմում է, թե ամեն ինչ ըսկընես 1975 թ. աշնանը Թեհրանում բացված «Միջնադարյան հայ ճարտարապետությունը 4—17-րդ դդ.» ցուցահանդեսից, որն արդյունք էր Իրանի մշակույթի միջխտրության և Թեհրանի իտալական մշակույթի ինստիտուտի համագործակցության՝ հովանավորությամբ Իտալիայի արտաքին գործերի մինիստրության և տեղի հայկական համայնքի վճարող օժանդակությամբ: Ցուցահանդեսի մեծ հաջողությունը ճանապարհ հարթեց հետագա պայմանագրերի կնքման և Իրանի տարածքի հայկական հուշարձանների գիտահետազոտական աշխատանքների համար: Վերոնշյալ երեք առաքելությունները՝ մասնակցությամբ Միլանի հայ մշակույթի և փաստավավերագրության կենտրոնի, Միլանի պոլիտեխնիկումի ճարտարապետության ֆակուլտետի, Բոլոնիայի համալսարանի, Իրանի ազգային համալսարանի և ԽՍՀՄ ԳԱ մասնագետների, նպատակը ոչ միայն հայ տարրի ուսումնասիրությունն էր Իրանի տարածքում, այլև վկայակոչումներ գտնելը իսլամական

ճարտարապետի հետ հավանական աղբյուրությունների: Աշխատանքների երկրորդ աստիճանը կատարվել է Արաքս գետի երկայնքով՝ ԽՍՀՄ-ի հետ սահմանամերձ շրջանում: Ալփակո-Նովելլոն գրում է, որ այս տեղանքի բաժանումը Իրանի, Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև շատ էր դժվարացրել այս հուշարձանների միաժամանակյա ուսումնասիրությունը և համեմատությունը հարևան շրջանների նույնանման կոթողների հետ: Նա ցավով ու զայրույթով նշում է, որ ուսումնասիրվել է միայն Արաքսի աջ ափի եկեղեցիները, իսկ ձախ ափը անմատչելի է մնացել:

Գրքի առաջին «Պատմական ակնարկ» հոդվածում հեղինակը ամփոփ ձևով ներկայացնում է հյուսիսային Իրանում ապրող հայերի պատմությունը: Նա ցավում է, որ դեռևս մինչև հիմա Ատրպատականի հայության ամբողջական պատմությունը չի գրվել, ոչ էլ կան մատչելի գրական աղբյուրներ, որոնց կարելի լիներ վստահել: Հեղինակը վկայում է, որ Պարսկաստանի հայերի մասին առաջին տեղեկությունները վերաբերում են դեռևս մ. թ. ա. 6-րդ դ.: Իսկ Օահ Արասի կողմից հայերի բռնի տեղահանումից ու Պարսկաստանում վերաբնակեցումից հետո հայերի գործունեությունը ավելի լայն ծավալ է ստանում այդտեղ: Ժամանակ առ ժամանակ հայերին ընձեռվում են առանձնաշնորհումներ: Իսկ կրոնի հարցում պետության վարած հանդուրժողական դիրքը թույլ է տալիս հայերին քարավանելու, պահպանելով և՛ ազգային ավանդույթներն ու սովորույթները, և՛ կապը (թեկուզ թույլ) բուն Հայաստանի հետ: Այսօր այն բազմաթիվ շրջանները, որ պատմության ընթացքում բնակեցվել են հայերով դատարկ են, հատկապես Ուրմիա լճի արևմտյան ափերը և կենտրոնական Իրանի հարավային գավառները: Այս երևույթի պատճառները երկուսն են. 1) հետամնաց գավառներից հայության հոսքը դեպի քաղաքներ, և 2) Հայկական խորհրդային հանրապետության ստեղծման քերտումով մեծ հայրենազարմաությունը (1940—1946 թթ.) դեպի հայրենիք: Օահի լճամուտային տապալումից և իսլամական հանրապետության

տությամբ ստեղծումով հայերի վիճակը ընդհանուր առմամբ անփոփոխ է մնացել: Բայց իտալացի գիտնականը ճիշտ է նկատում, որ հայերը միշտ էլ ցուցաբերել են կարողություն և կամք խաղաղ ապրելու ցանկացած երկրում, այնտեղ որտեղ «իրենք իրենց տանն են գտնում»:

«Իրանյան Ադրբեջանի հայկական եկեղեցիների աշխարհագրական տվյալները և ճարտարապետական տիպարանությունը» վերնագրով գրքի գլխավոր հոդվածում Ալփակոնտովելլոն գրում է, որ պատմական սուղ տեղեկությունները, երբեմն բոլորովին քաղաքայնությունը, ստիպել են տալիս հետազոտողներին հիմնականում հենվել տեղաբնիկների քանակոր խոսքերի վրա: Ուսումնասիրվող տեղանքի կենտրոնն էր Թավրիզը, իսկ մյուս խոշոր քաղաքներն էին Մարանդը, Խոյը, Մակուն հյուսիսում, Ջուղան Արաքսի վրա, Սալմաստն ու Ուրմիան լճի արևմտյան ափին, իսկ Մարաղեն՝ հակառակ ափին: Աշխարհագրականորեն բուն Հայաստանից կտրվածությունը, տեղական էթնիկ տարրերի ու կրոնական տարբերությունների անխուսափելի ազդեցությունները, քնակլիմայական պայմանները, թելադրում են Ատրպատականի շինություններին ստանալու ուրույն ճարտարապետական ձևեր՝ համադրելով տեղականն ու ազգայինը, թե ճարտարապետական ձևերի և թե շինարարական տեխնիկայի առումով: Բայց ինչպես հայ ճարտարապետության մեջ ընդհանրապես, այստեղ ևս 15—18-րդ դարերում վերածնունդ են ապրում բուն հայկական ձևերը, և քիչ չեն մնան օրինակները. Մուծումբարի, Մահլամի, Կարա-քիլիսեի և Սարգիս քազիլիկ եկեղեցիները, և Թաղեի վանքի, և Ստեփանոսի, Խոյի և Աստվածածնի, Ղարադաղի և Պետրոսի գմբեթավոր եկեղեցիները և ուրիշներ: Իսկ Գեարդաբադի և Գևորգ, Դարաշամբի և Աստվածածին, Նախիջևան Թափայի և Աստվածածին և Ֆանայի եկեղեցիները թե հատկապես և թե արտաքուստ կրում են տեղական իրանա-սասանյան շինարվեստի խոր ազդեցությունը: Ծինանյութը՝ լեռնային շրջաններում կոպտատաշ, շատ հաճախ անտաշ քարն է, հովիտներում՝ թրծված և հում աղյուսը և պարզապես կավածեփ շինությունները: Գյուղական բնակավայրերը, հիմնականում տեղադրված լեռան լանջերին, դասավորված են աստիճանաձև, հարթ, տափակ փայտե տանիքներով և կավածեփ ու հում աղյուսաշեն տներով: Եկեղեցիների ներքին մանրամասներից հանդիպում ենք փայտե սյուների վրա հանգչած տանիքների: Ա. Ալփակոնտովելլոն նկատում է, որ այս երևույթը (ժողովրդական տան մոդելը— հազարաշեն երդիկ և գերանների վրա հանգչած փայտե տանիք) հայ եկեղեցաշինության մեջ հազվադեպ է օգտագործվում, քացառու-

թյամբ Առաքելոց եկեղեցու գավթից, որը նույնպես կրոնական ոչ հիմնական շենքն է, սակայն այստեղ և հարևան Վասպուրական մահանգում մման օրինակներ քիչ չեն հանդիպում: Հեղինակի բացատրությունը հետևյալն է, որ սրանք լինելով կղզիացած շրջանների կառույցներ, որտեղ անհրաժեշտություն կար տեղի այլադավան ազգությունների հետ համերաշխ ապրելու, ձգտում է եղել կրոնական շենքերը կառուցել այնպես, որ շատ չտարբերվեն բնակելի տներից:

Իրանի հայկական եկեղեցիների համառոտ աղյուսակով հեղինակը փորձում է դասակարգում մտցնել եկեղեցական օգտագործված տիպերի մեջ, իսկ ըստ շրջանների առանձնացված ծխական եկեղեցիների այբբենական ցուցակը կարծում ենք, որ ամբողջական պատկերացում է տալիս այստեղ գտնվող կրոնական շինությունների տեղի, ժամանակի, շինանյութի և այսօրվա վիճակի մասին: Ա. Ալփակոնտովելլոն ծխական եկեղեցիների հետ կապված խոսում է նաև Իրանում հայ եկեղեցու թեմերի մասին ընդհանրապես: Հայ եկեղեցու կրոնական և վարչական կազմակերպումն այստեղ կենտրոնանում է Թավրիզի, Իսպահանի և Թեհրանի թեմերում: Թավրիզի թեմն իր մեջ ընդգրկում է ոչ միայն Իրանյան Ադրբեջանը, այլև ամբողջ Ուրմիայի հարավային ավազանը մինչև Թուրքիա և Իրաք, և դեպի արևելք՝ Կասպից ծովի ափերը: Աշխարհագրականորեն պատմական Հայաստանի մի մասն ընդգրկող այս շրջանում գտնվում են վաղագույն և ճորագույն հուշարձաններ՝ աղերսվող հարևան Վասպուրականի և Ղարաբաղի կոթողների տիպերի հետ: Եվ իհարկե այս թեմում են Իրանի ամենակարևոր հուշարձանները. և Ստեփանոսի, և Թաղեի, Ձործորի, Դերիկի, և Աստվածածնի վանքերը և Խոյի ու Մուծումբարի քազիլիկները: Կան նաև հարյուրից ավելի փոքր եկեղեցական շինություններ, որոնք չեն ուսումնասիրվել, չեն չափագրվել և այժմ լքված ու ավերակ վիճակում են գտնվում: Թավրիզ հայահոծ քաղաքը, մոտ կես միլիոն հայ բնակչությամբ, եպիսկոպոսանիստ է, կան դպրոցներ, հայկական տարբեր կազմակերպություններ ու միություններ, կա մի շքեղ թանգարան ևս, որտեղ ամփոփված են պատմական որոշ աղբյուրներ, ձեռագրեր, գրքեր և կրոնական ու ծխական արարողությունների զանազան իրեր:

Իսպահանի թեմի սահմաններն են երկրի կենտրոնը, հարավային կենտրոնական մասը, արևմուտքը, մյուս կողմից մինչև Հնդկաստան, որտեղ հայերը բնակվում են Մադրաս, Կալկաթա և Բոմբեյ քաղաքներում: Հայերի հայտնվելը Իրանի խորքերում հետևանք էր Ծախ Աքասի կողմից 17-րդ դարի սկզբին բռնագաղթմանը: Այս թեմում հաշվվում են մոտ ութսուն շինություններ իրենց շինարարական առանձնահատկություններով սերտո-

րեն կապված կենտրոնական Իրանի ճարտարապետական և կառուցողական ավանդույթների հետ:

Թեհրանի թեմը ներառում է Իրանի մայրաքաղաքի այժմյան վարչական շրջանը: Այս թեմը եկեղեցիների որակով և քանակով ամենաաղքատն է (13 եկեղեցիներ միայն): Բոլոր եկեղեցիներն էլ կառուցված են 1808 թ.-ից հետո:

Եվ վերջապես գրքի խորագիր՝ Սորհույի մասին: Մեզ թվում է, որ վերնագիրը պայմանական բնույթ է կրում: Նպատակը եղել է մի ընդհանուր ակնարկով ներկայացնել Իրանի հյուսիսային հատվածի հայկական հուշարձանները, իսկ համեմատաբար նորագույն շրջանում կառուցված Սորհույի եկեղեցին, իր յուրահատկությամբ աչքի ընկնելով, արժանացել է հատուկ ուշադրության, և հետևաբար իր անունով է կոչվել գիրքը: Հատորի մեջ Թավրիզի թեմի Սորհույ գյուղի ս. Հովհաննես եկեղեցուն նվիրված է մի փոքր հոդված միայն: Սույն եկեղեցին կառուցվել է 1840 թ. համանուն գյուղի բարձունքում: Գմբեթավոր սրբաբնի է, երկհարկ նախագավիթով, որի վրա քարծրանում է աշտարականման թմբուկով զանգակատունը: Գլխավոր կենտրոնական գմբեթը արտաքուստ գլանաձև է, իսկ վեղարը՝ կոնաձև: Աբսիդի թաղը ավարտվում է արտաքինից բրգաձև փոքր գմբեթով: Ներքին գլխավոր հարդարանքը կենտրոնական կախովի առագաստների վրա հանգչած գմբեթն է: Ծիսանյութը աղյուսն է: Իտալացի հեղի-

նակի քառերով՝ եկեղեցու աշտարակաձև զանգակատունը հիշեցնում է Իրանի սելջուկյան դամբարանները, հովհարաձև վեղարը զուտ հայկական երևույթ է, իսկ արտաքին կեղծ կամարաշարը «արևմտյան» մտիվ է: Բայց անմիջապես հեղինակն ինքն իրեն ճշտելով գրում է, թե դա Անիի ճարտարապետական դպրոցի առանձնահատկություններից է: Ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է այն ժամանակ, երբ Թիֆլիսի ոռու արհեստավորներն ու ֆրանսիացի ճարտարապետները Թավրիզում կառուցել են մի շարք եկեղեցիներ, և որ Սորհույը ամենայն հավանականությամբ նրանցից մեկը կարող է լինել: Ըստ ավանդության եկեղեցին կառուցվել է ոմն հայ մեծահարուստի՝ Հակոբովի հողամասի վրա, և նվիրվել Սորհույ գյուղի բնակիչներին: Եկեղեցին այսօր ունի ճեղքվածքներ, հավանաբար 1936 թ. երկրաշարժի հետևանքով, և հողամասի ընդերքի ամրության բացակայության պատճառով:

Գիրքը զարդարող գունավոր լուսանկարների հավաքածուն աշխատանքն են հեղինակի, Արմեն Հախնազարյանի, Հարթմուտ Հոֆրիխտերի, Նիչե Վեչիոնիի և Ժորես Ոսկանյանի: Չափագրություններն ու հատակագծերը կատարվել են հայ, իտալացի և գերմանացի արշավախմբին մասնակցող մասնագետների կողմից:

Ա. Ժ. ԼԻՍՆՑԿԻ